ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՕԲԹ-ԳՀԱՊՁԲ-25/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի

հայտերի բացման և գնահատման նիստի

ք. Երևան 24 փետրվարի, 2025 թվական

ժամը 14:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ ՝ Գ. Մկրտչյան

Հանձնաժողովի անդամ Լ. Հովակիմյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ավետիսյան

**1. Տեղեկություններ հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին**

**/հանձնաժողովի նախագահ Գ. Մկրտչյան/**

1.1 «ՕԲԹ-ԳՀԱՊՁԲ-25/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերը բացվել են հրավերով սահմանված վայրում և ժամկետում՝ քաղաք Երևան, Թումանյան 54 հասցեում, 2025 թվականի փետրվարի 7-ին, ժամը 15:30-ին:

**2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները /անունները/ և հասցեները**

**/հանձնաժողովի նախագահ Գ. Մկրտչյան/**

2.1 «ՕԲԹ-ԳՀԱՊՁԲ-25/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտ ներկայացրել է հետևյալ մասնակիցները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը /անունը/ | Մասնակցի հասցեն, հեռախոսահամարը | Մասնակցի էլ. փոստի հասցեն |
|---|---|---|---|
| 1 | «Սամմուս Թրեյդ Գրուպ» ՍՊԸ | ք. Երևան, Ամիրյան 26<br>հեռ. 012 48 25 97 | kristine.vardanyan@armeniawine.am |
| 2 | «ՖՈՒԴ ՄՈՒԴ» ՍՊԸ | ք. Երևան, Ավան, Հովհաննիսյան 24/7<br>հեռ. 010 62 49 66 | foodmood1@yandex.com |
| 3 | «Էմանուել Նալբանդյան Էդուարդի» ԱՁ | ք. Երևան, Գր. Արծրունու փ. 10 շենք, բն. 7<br>հեռ. 096 502 442 | nalbandyan1972e@mail.ru |

**3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ**

**/հանձնաժողովի նախագահ Գ. Մկրտչյան/**

**3.1** Մասնակցի կողմից «ՕԲԹ-ԳՀԱՊՁԲ-25/02» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտեր պարունակող ծրարները կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

**4. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության, յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին**

**/հանձնաժողովի նախագահ Գ. Մկրտչյան/**

**4.1** «ՕԲԹ-ԳՀԱՊՁԲ-25/02» գնանշման հարցման ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացված հայտեր պարունակող և գնահատող հանձնաժողովի կողմից բացված յուրաքանչյուր ծրարում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը և յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, բացառությամբ

- «Ֆուդ Մուդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված **Հավելված 1.1-ի՝ Ապրանքի ամբողջական նկարագրի 7-րդ տողում նշված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերի պահանջներին:**

- «Սամմուս Թրեյդ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ը և Հավելված 2-ը չեն համապատասխանում հրավերի պահանջներին, Հավելված 2-ում՝ Գնային առաջարկ, «Ապրանքի անվանում» դաշտում սխալ են լրացվել ապրանքների անվանումները, **Արժեք /ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը/ տառերով և թվերով/, ԱԱՀ /տառերով և թվերով/, Ընդհանուր գինը /տառերով և թվերով/ սյունյակներում գումարները լրացված են միայն թվերով:**

4.2 ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման հաստատված կարգի 40-րդ կետի 4-րդ մասի համաձայն, «Սամմուս Թրեյդ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը ենթակա է մերժման:

4.3 «ՕԲԹ-ԳՀԱՊՁԲ-25/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 41-րդ կետով, որոշեց առաջարկել «Ֆուդ Մուդ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրում շտկել առկա անհամապատասխանությունները: Անհամապատասխանությունները սահմանված ժամկետում չշտկելու դեպքում մասնակցի հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0**

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | Գ. Մկրտչյան |
| Հանձնաժողովի անդամ | Լ. Հովակիմյան |
| Հանձնաժողովի քարտուղար | Ա. Ավետիսյան |